ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐՈՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(28 հունիսի, 2014 թ.)

«Եւ եթէ իմանայիք, թէ ի՞նչ է՝
«Ողորմութիւն եմ կամենում եւ ոչ՝ զոհ»,-
ապա դուք անպարտներին չէիք դատապարտի...»:

Սիրելի՛ բարեպաշտ քույրեր և եղբայրներ,

Հիշյալ մեջբերումը վերցված է քիչ առաջ Ս. Պատարագի ընթացքում հնչած Մատթեոսի Ավետարանի ԺԲ. գլխի 7-8 համարներից, որտեղ փարիսեցիները մեղադրում են Հիսուսին, թե Իր աշակերտները խախտում են շաբաթը. արտի միջով անցնելիս նրանցից ոմանք, քաղցած լինելով, պոկել էին հասկերը և կերել: Հիսուս սուրբգրային օրինակներով ցույց է տալիս փարիսեցիների քննադատության անարդարացիությունը և եզրակացնում, որ նրանք դատապարտում են անպարտներին: Թերևս ավետարաններում հանդիպող ամենաառօրեական պատկերներից մեկն է սա, որը մեր աչքի առաջ վերակենդանացնում է Քրիստոսի երկրավոր սպասավորության հետաքրքիր մանրամասներ: Չնայած այն իր ծավալով փոքր է, սակայն շատ կարևոր պատգամ է փոխանցում մեզ, օգնում է հասկանալ, որ հոգևոր կյանքն արտաքին ձևերով չի պայմանավորված, այլ ներքին բովանդակությամբ, այն սովորեցնում է մեզ, որ ավելի լավ է գործ չունենալ հավատի հետ, քան թե հոգևոր մարդ ձևանալ, և վերջապես այն ուսուցանում է մեզ կեղծիքի կործանարար հետևանքների մասին: Ակամա հարց է առաջանում, ինչ նկատի ունի Հիսուս, երբ քննադատում է փարիսեցիներին սուրբգրային խոսքերը չիմանալու համար, քանի որ շատ հռետորական է հնչում Նրա «Եթե իմանայիք» արտահայտությունը: Արդյո՞ք Հիսուս ցանկանում է ասել, որ փարիսեցիները ծանոթ չեն հիշյալ խոսքերին կամ դրանց իմաստին, թե՞ պարզապես հեգնում է, որ գիտեն, բայց կարևորություն չեն տալիս: «Եթե իմանայիք»... Առաջին հայացքից թվում է, թե Հիսուսի պատասխանը կտրված է նյութի ընդհանուր շարադրանքից. տպավորությունն այնպիսին է, թե Նա ցանկանում է ունկնդիրների ուշադրությունը շեղել այլ հարցի վրա, մինչդեռ փարիսեցիները որոշակի մեղադրանք էին

հնչեցրել հենց շաբաթ օրվա առնչությամբ: Երբ մի կողմ ենք դնում տպավորությունները, ապա տեսնում ենք, որ Հիսուս բնավ այլ ուղղությամբ չի տանում խոսակցությունը, Նա լիովին տիրապետում է իրավիճակին, և ավելին, թափանցել է փարիսեցիների քննադատության բուն խորքը, շոշափել դրդապատճառը: Նա պարզապես բացահայտում է նրանց կեցվածքի սնանկությունը, և հերթական անգամ գաղափարապես մերկացնում նրանց՝ ճշմարտությունն աղավաղելու հարցում: Միևնույն ժամանակ Հիսուս այն կրոնական հեղինակություններից չէր, որոնք հակված էին քննադատության, Նա քննադատում է միայն հանուն ճշմարտության, որովհետև անհնար է լռեցնել արդարությունը: Այստեղ է Հիսուսի եզակիությունը: Նա ցանկացած պարագային ասում է ճշմարտությունը, պետք է պարզապես պատրաստ լինել այն լսելու: Հիսուս չէր կարող այլ կերպ վարվել, դա հավասար կլիներ Նրա կողմից սեփական Եսն ուրանալուն. Ո՞վ պիտի ասի ճշմարտությունը, եթե ոչ Նա, ով Իր մասին ասում է՝ «Ես եմ Ճանապարհը և Ճշմարտութիւնը և Կեանքը» (Յովհ. ԺԴ. 6): Նա ասում է ճշմարտությունը, որովհետև գիտի, որ միայն ճշմարտությունն է մարդուն ազատագրում, այդ իսկ պատճառով Նա քարոզում է՝ «Եւ կճանաչէք Ճշմարտութիւնը, և Ճշմարտութիւնը Ձեզ ազատ կդարձնի» (Յովհ. Ը. 32): Նա հորդորում է փարիսեցիներին ճշմարտությունը ճանաչել որպես բարձրագույն արժեք, քանզի դա է հոգևոր կյանքի հիմքը... Ցանկացած նենգափոխում հանգեցնում է անարդարության: Յուրաքանչյուրն իր անձնական փորձառությամբ կվկայի, որ ոչինչ մեզ այդքան չի հիասթափեցնում, այդքան չի վիրավորում, որքան անարդարությունը: Ուստի և Հիսուս քննադատում է փարիսեցիներին՝ իրենց անարդարության համար:

Այո՛, Հիսուս քննադատում է փարիսեցիներին, սակայն պաշտպանում է բոլոր այն անպարտների իրավունքները, որոնք զոհ են դարձել անարդարության: Սիրելի՛ քույրեր և եղբայրներ. Հիսուսի քննադատությունը միայն փարիսեցիներին չէր ուղղված, այլ բոլոր նրանց, ովքեր կեղծում են ճշմարտությունը: Այսօր ևս ճշմարտությունը տեսնելու Նրա կոչը արդիական է հնչում, երբ շուրջբոլորը լի են մարդիկ, որոնք իրենց շահերից մղված նենգափոխում են այն, այդպիսով բռնանում նաև մարդկային ազատության վրա, հավատ ներշնչում այնպիսի գաղափարների հանդեպ, որոնք կեղծ են ու սին, քարոզում արժեքներ, որոնք դեմ են մեր հոգևոր և ազգային նկարագրին: Վերջին շրջանի համաշխարհային պատմությունը ցույց է տալիս, որ որոշ պետություններ և քաղաքական գործիչներ հաճախ նենգափոխում են իրականությունը, որի արդյունքում պատերազմներ, ավերածություններ, զանգվածային բնաջնջումներ են տեղի ունենում աշխարհի տարբեր հատվածներում: Այս ամենը կատարվում է, երբ մարդիկ ակամայից զոհ են դառնում շահադիտական նպատակներ հետապնդող՝ ծրագրված դավադրությունների, ուր սեփական ցանկությունների բավարարումն ավելին է, քան մարդկային կյանքը: Եւ

այս ամենի մեջ մեծ դերակատարություն ունի տեղեկատվությունը, քանի որ այն ի զորու է ազդելու դեպքերի զարգացման ընթացքի վրա, խթանելու կամ կասեցնելու այն: Այսօր հաճախ է հնչում, որ աշխարհը ղեկավարում է տեղեկատվությունը, որ այն հասարակության վրա իշխելու հզոր միջոց է՝ անգամ զենք կամ ուժ: Առօրեական է դարձել «տեղեկատվական պատերազմ» արտահայտությունը: Եւ այսօր ճշմարտությունը նենգափոխողները բնավ տարբեր չեն այն փարիսեցիներից, որոնք առաջնորդվում էին շահադիտական նպատակներով: Այս իմաստով քրիստոնեական բարոյականությունը մեծ պատասխանատվություն է վերագրում մամուլին ու տեղեկատվությանը, որ կոչված են ճշմարտությունը բարձրաձայնելու և պաշտպանելու կարևոր առաքելությանը, որ հասարակության առողջ ու անվտանգ զարգացման գլխավոր երաշխիքն է: Առաքելություն, որին քչերն են այսօր կարողանում հավատարիմ մնալ, սակայն այս նվիրյալներն են, որ հանուն ճշմարտության պաշտպանում են անպարտների իրավունքները...

Սիրելի՛ բարեպաշտ քույրեր և եղբայրներ, Այսօր ուրախալի առիթ է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և հավատացյալ դասի համար: Ամենայն Հայոց Հայրապետի բարձր նախագահությամբ երեկ Գևորգյան ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Պոլսի «Ժամանակ» թերթի 106-ամյակին նվիրված հանդիսություն, ամենաբարձր մակարդակով գնահատվեց նրա անցած ուղին և իրականացրած կարևոր առաքելությունը հայ կյանքում:

Ժամանակին հայ մեծանուն գրող Վիլյամ Սարոյանն ասել է, որ արյունոտ կայսրությունն ընդամենը մի գերակա և կարևոր ցանկություն ուներ՝ վերացնել, ջնջել և առհավետ լռեցնել հայ լեզուն: Սակայն աստվածային նախախնամությունն այլ ծրագիր ուներ. անմարդկային ջարդերից հետո, երբ թվում էր, թե կյանքը պարզապես պիտի կանգ առնի, յուրաքանչյուր քաղաք, գյուղ, ավան, ցանկացած բնակավայր, ուր գոյատևեցին կամ հաստատվեցին հայերը, ունեցավ իր առանձին թերթն ու ամսագիրը, օրաթերթը, որոնցից յուրաքանչյուրն ասես բարձրաձայնում էր՝ անհնար է լռեցնել հայ լեզուն, հայ աղոթքն ու խոսքը, հայ երգն ու շարականը: Այսօր անհնար է հայ մամուլի պատմությունը պատկերացնել առանց արժանին մատուցելու պոլսահայ պարբերականներին, ինչպես և դժվար է պոլսահայ մամուլին անդրադառնալ՝ առանց հիշելու «Ժամանակ» օրաթերթը...

Այսօր «Ժանամակ» օրաթերթը բոլորել է իր 106-ամյակը: Օրաթերթ, որ հայ իրականության մեջ հիմնադրության օրվանից առանց դադարների հրատարակվող ամենահին պարբերականն է, ամենաավագը... Եւ սկսյալ հիմնադիր-խմբագիրներ՝ Միսաք և Սարգիս Գոչունյաններից մինչև այսօրվա գլխավոր խմբագիրը՝ Արա Գոչունյանը, Գոչունյան գերդաստանի անդամները, որ ստանձնել էին Պոլսում տպագրվող օրաթերթի բարդ և պատասխանատու

գործը, մեկ դարից ավելի մշտապես իրականացրել են դեռևս 1908-ին ուղենշված ծրագիրը. համահայկական գաղափարների լույսի ներքո նպաստ բերել հայապահպանությանն ու հայրենասիրությանը, լինել ազգային մտավորականության ու Առաքելական Եկեղեցու կողքին: Եւ բնական է, որ տարբեր տարիների «Ժամանակ»-ին թղթակցել են հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչները՝ Կոմիտաս Վարդապետ, Գրիգոր Զոհրապ, Երվանդ Օտյան, Զապել Եսայան և այլք... Ցավոք, Եղեռնի տարիներին «Ժամանակ» թերթի մերձավորագույն գրչակիցներից շատերն ընկան արյան և ավերի ճանապարհներին: Սակայն «Ժամանակը» դիմագրավեց դաժան ժամանակների փորձությանը և իր 106-ամյա բարձրությունից շարունակում է բարձրաձայնել. անհնար է լռեցնել հայ լեզուն, հայ աղոթքն ու խոսքը, հայ երգն ու շարականը... գուցե հենց այն պատճառով, որ «Ժամանակի» տոհմիկ խմբագիրներն իզուր չէ, որ Գոչունյան ազգանունն են կրում և պետք է միշտ գոչեն՝ «Ժամանակն է, որ ամենուր հնչի հայ լեզուն, հայ աղոթքն ու խոսքը, հայ երգն ու շարականը»...

Բարի ընթացք մաղթենք «Ժամանակ» թերթի աշխատակազմին, Գոչունյան գերդաստանին և բոլոր նրանց, ում համար քրիստոնեական բարոյականությունը և նվիրվածությունը ազգային ու համամարդկային արժեքներին գերակա և անբեկանելի առաքելություն է, որն իրականացնելու համար երբեք անպարտներին չեն դատապարտի և ցանկացած պարագային կասեն ճշմարտությունը...